



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐ
ՀՐԱՄԱՆ

No _____

« _____ » _____ 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ


ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի N 703-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ԿԳ նախարարության կանոնադրության 11-րդ կետի 22-րդ և 18-րդ կետի 20-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պարգևների ձևերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պարգևների ներկայացման և շնորհման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 Invalid signature

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ



ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԿԻՆԱԿՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՄԱՐՏԻ



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎՈԳԻՐ



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎՈԳԻՐ




ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԵՐՈՒՄ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱՄԵԴԱԼ



Հավելված2
 ՀՀ ԿԳ նախարարի 2019 թվականի
 «___» մարտի թիվ _____ հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎ
 ՆԵՐԻՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳ**

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) մասնագիտական գործունեություն իրականացնող և համակարգի զարգացման գործում ավանդ ունեցող անձանց, կազմակերպություններին նախարարության պարգևների ներկայացման և շնորհման ընթացքը:
2. Նախարարությունը պարգևատրում է շնորհակալագրով (Ձև 1), պատվոգրով (Ձև 2) և ոսկե հուշամեդալով (Ձև 3):
3. Նախարարության շնորհակալագիր, պատվոգիր տրվում է կրթության և գիտության ոլորտում գիտական, գիտամանկավարժական, մանկավարժական գործունեություն իրականացնող անձանց, ովքեր բարեխղճորեն և նվիրումով կատարում են իրենց մասնագիտական աշխատանքը, ինչպես նաև սովորողներին ու կրթությանը աջակցող, սատարող կազմակերպություններին: Ոսկե հուշամեդալը նախարարության բարձրագույն

պարզևն է, որը տրվում է կրթության ոլորտում զգալի ավանդ և երկարամյա (15 տարի) անբասիր աշխատանք ունեցող անձանց, բարերարներին, կազմակերպություններին, կրթության և գիտության ոլորտում միջազգային համագործակցության զարգացման գործընթացին նպաստող անձանց և կազմակերպություններին:

4. Պարգևատրման գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը:

5. Նախարարություն պարգևատրման համար միջնորդություն կարող են ներկայացնել ՀՀ նախարարությունները, գերատեսչությունները, ՀՀ մարզպետները (Երևանի քաղաքապետը), ՀՀ ԿԳ նախարարության գլխավոր քարտուղար, օտարերկրյա ուսումնական հաստատությունները, հասարակական և այլ կազմակերպություններ:

6. Նախարարության համապատասխան ստորաբաժանումները քննարկում և ամփոփում են պարգևատրման համար ներկայացված միջնորդագիր-դիմումը կամ գրությունը, որի հիման վրա պատրաստվում է զեկուցագիր-առաջարկ՝ նշելով պարգևատրման ձևը (ոսկե հուշամեդալ, պատվոգիր, շնորհակալագիր):

7. Հիմք ընդունելով զեկուցագիր-առաջարկը՝ պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը պատրաստում է հրամանի նախագիծ՝ պարգևատրման մասին:

8. ՀՀ կրթության և գիտության նախարարության պարզևի կարող են ներկայացվել, ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ, կազմակերպություններ:

9. Միջնորդագրին կից նախարարություն են ներկայացվում՝

1) կենսագրական տվյալներ պարգևատրվող անձի վերաբերյալ, բնութագիր

2) տեղեկություններ պարգևատրվող կազմակերպության վերաբերյալ:

10. Շնորհակալագրով, պատվոգրով և ոսկե հուշամեդալով պարգևատրման համար հաջորդականության պարտադիր պահանջ չկա: Ոսկե հուշամեդալով կարելի է պարգևատրել՝ շրջանցելով նախորդ 2 ձևի պարգևները:

11. Նախարարության պարգևները հանձնում է նախարարը կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձը:

12. Նախարարության ոսկե հուշամեդալով կրկնակի պարգևատրում չի կատարվում: